Տ. ԱՌԱՔԵԼ ԱԲԵՂԱ ՔԱՐԱՄՅԱՆ

Ծնվել է 1962 թ. հուլիսի 20-ին Մարտունու շրջանի Երանոս գյուղում:

1968—78 թթ. սովորել և ավարտել է տեղի Պերճ Պռոշյանի անվան միջնակարգ դպրոցը:

1979—80 ուս. տարում սովորել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական մասնաճյուղում, ապա նույն տարին ընդունվել է հոգևոր ճեմարան:

1982—84 թթ. ծառայել է խորհրդային բանակում, որից հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

1988 թ. մայիսի 12-ին ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի ձեռնադրվել է սարկավագ:

1989 թ. մարտի 15-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Եփրեմ Սսեցի Աջապահյան կաթողիկոսի «Մեկնութիւն Յովհաննու մարգարէի» թեմայով և արժանացել ԼԱՎ գնահատականի:

Այժմ աշխատանքի է նշանակվել Սիսիանի շրջանի Ս. Հովհաննես եկեղեցում, որպես հոգևոր հովիվ: